

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սնագրության համար:

1

Որո՞նք են մարտական ապահովման տեսակները (ջոկ, դասակ).

1. հետախուզություն, մարտավարական քողարկում, ինժեներական ապահովում, քիմիական ապահովում, պաշտպանություն զանգվածային խոցման զենքից, պաշտպանություն,
2. հետախուզություն, մարտավարական քողարկում, ինժեներական ապահովում, քիմիական ապահովում, պաշտպանություն զանգվածային խոցման զենքից, դիտարկում,
3. հետախուզություն, մարտավարական քողարկում, ինժեներական ապահովում, քիմիական ապահովում, պաշտպանություն զանգվածային խոցման զենքից, պահպանություն,
4. հետախուզություն, մարտավարական քողարկում, ինժեներական ապահովում, քիմիական ապահովում, պաշտպանություն զանգվածային խոցման զենքից, ամրաշինական սարքավորումներով ապահովում:

2

Որո՞նք են հետախուզության վարման հիմնական եղանակները.

1. տեղագնում, գաղտնալսում, քողարկում, դարականալում, գերիների և փախստականների հարցաքննում, մարտով հետախուզություն,
2. դիտարկում, կապի միջոցների խաթարում, դարականալում, գերիների որսագողություն և տեղաբնակների հարցաքննում, մարտով հետախուզություն,
3. դիտարկում, որոնում, հանկարծակի հարձակում, դարանակալում, մարտով հետախուզություն, գաղտնալսում, ռադիոբռնում, լուսանկարում, գերիների և փախստականների հարցաքննում,
4. դիտարկում, գաղտնալսում, որոնում, դարանակալում, գերիների և տեղաբնակների քողարկում:

3

Որքա՞ն է հակահետևակային ականների քողարկիչ շերտի հաստությունը.

1. 3-4 սմ
2. 1-2 սմ
3. 5-8 սմ
4. 4-5 սմ

Ի՞նչ է պարզում զինվորը հարձակման ժամանակ մարտական առաջադրանք ստանալով.

1. կողմնորոշիչները, հակառակորդի կազմը և գործողության բնույթը, կրակային միջոցների տեղաբաշխումը, դասակի, ջոկի և իր խնդիրը, իր տեղը շղթայում, ոչնչացման ենթակա նշանակետերը և կրակ վարելու կարգը, այն տանկի համարը և տարբերանշանը, որին հետևելու է ջոկը, ինչպես նաև հրետանու և այլ կրակային միջոցներ օգտագործելու կարգը, ՀՄՄ /ԶՓ/-ից իջնելու տեղը, արգելքներ հաղթահարելու կարգը, ազդարարման, կառավարման փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, հարձակմանը պատրաստ լինելու ժամանակը:
2. կողմնորոշիչները, հակառակորդի կազմը և գործողության բնույթը, դասակի, ջոկի և իր խնդիրը, իր տեղը շղթայում, կրակագիծը և գնդակոծման լրացուցիչ հատվածը, այն տանկի համարը և տարբերանշանը, որին հետևելու է ջոկը, ինչպես նաև հրետանու և այլ կրակային միջոցներ օգտագործելու կարգը, ՀՄՄ /ԶՓ/-ից իջնելու տեղը, արգելքներ հաղթահարելու կարգը, ազդարարման, կառավարման փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, հարձակմանը պատրաստ լինելու ժամանակը:
3. կողմնորոշիչները, հակառակորդի կազմը գործողության բնույթը, դասակի, ջոկի և իր խնդիրը, իր տեղը շղթայում, օդային նշանակետերի դիտարկման և դրանց վրա կրակ վարելու կարգը, այն տանկի համարը և տարբերանշանը, որին հետևելու է ջոկը, ինչպես նաև հրետանու և այլ կրակային միջոցներ օգտագործելու կարգը, ՀՄՄ /ԶՓ/-ից իջնելու տեղը, արգելքներ հաղթահարելու կարգը, ազդարարման, կառավարման փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, հարձակմանը պատրաստ լինելու ժամանակը:
4. կողմնորոշիչները, հակառակորդի կազմը գործողության բնույթը, դասակի, ջոկի և իր խնդիրը, դասակի կենտրոնացված կրակի տեղամասի այն հատվածները, որոնց վրա պետք է ուղղվի ջոկի կրակը, այն տանկի համարը և տարբերանշանը, որին հետևելու է ջոկը, ինչպես նաև հրետանու և այլ կրակային միջոցներ օգտագործելու կարգը, ՀՄՄ /ԶՓ/-ից իջնելու տեղը, արգելքներ հաղթահարելու կարգը, ազդարարման, կառավարման փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, հարձակմանը պատրաստ լինելու ժամանակը:

5

Ի՞նչ չի պարզում զինվորը պաշտպանության ժամանակ մարտական առաջադրանք ստանալով.

1. հակառակորդի կազմը, դիրքերը և գործողությունների բնույթը,
2. դասակի կենտրոնացված կրակի տեղամասի այն հատվածները, որոնց վրա պետք է ուղղվի ջոկի կրակը, հարևանների խնդիրները,
3. կրակագիծը և գնդակոծման լրացուցիչ հատվածը, ազդարարման, կառավարման փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը,
4. ոչնչացման ենթակա նշանակետերը և կրակ վարելու կարգը:

6

Որքա՞ն է դետրային ջոկի հեռավորությունը գլխավոր ուժերից կտրված ստորաբաժանումներից.

1. 300-400 մ հեռավորության վրա,
2. տեսողական և կրակային աջակցության հեռավորության վրա,
3. 100-200 մ հեռավորության վրա,
4. 200-300 մ հեռավորության վրա:

7

Քա՞նի հազարերոդականի է համապատասխանում քանոնի 1մմ-ը.

1. 0-03 հազարերոդականի,
2. 0-04 հազարերոդականի,
3. 0-02 հազարերոդականի,
4. 0-10 հազարերոդականի:

8

Եթե կան հասունացած պտուղներ և մրգեր, ապա դրանք հորիզոնի ո՞ր կողմն են ցույց տալիս.

1. հարավային կողմը,
2. հյուսիսային կողմը,
3. արևելյան կողմը,
4. արևմտյան կողմը:

9

Եթե ծառի կոճղի տարեկան աճի օղակները իրարից մեծ հեռավորության վրա են գտնվում, ապա դրանք հորիզոնի ո՞ր կողմն են ցույց տալիս.

1. հյուսիսային կողմը,
2. հարավային կողմը,
3. արևելյան կողմը,
4. արևմտյան կողմը:

10

Ի՞նչ է խստիվ արգելվում պետության կողմից գերության մեջ պահող ռազմագերիների նկատմամբ.

1. միևնույն զանցանքի համար պատժել կրկնակի, դատական հայց հարուցել նրա նկատմամբ,
2. չթույլատրել զբաղվել սպորտային խաղերով, իսկ զբաղվողների նկատմամբ կիրառել կոլեկտիվ պատժամիջոցներ,
3. աշխատող ռազմագերիներին տրամադրել լրացուցիչ սնունդ, հանդերձանք և բուժօգնություն,
4. ռազմագերիներին օգտագործել վտանգավոր աշխատանքներում, նրանց նկատմամբ կիրառել կոլեկտիվ պատժամիջոցներ, միևնույն զանցանքի համար պատժել կրկնակի, սննդին առնչվող ամեն տեսակի կարգապահական տույժեր տալ:

11

Ե՞րբ է ընդունվել մանրէաբանական և թունավոր զենքի մշակման, արտադրության, կուտակման և օգտագործման արգելման կոնվենցիան.

1. 1982թ.
2. 1992թ.
3. 1972թ.
4. 2002թ.

12

Ե՞րբ է ընդունվել գործող Ժնևյան կոնվենցիաները.

1. 1929թ.
2. 1949թ.
3. 1977թ.
4. 1958թ.

13

Ո՞րը ավտոմատի պահեստատուփի մաս չէ.

1. անրիկ
2. կափարիչ
3. պատյան
4. զսպանակ

14

Որքա՞ն է վառողային զագերի առավելագույն ճնշումը փողանցքում.

1. 3000 կգուժ/սմ²
2. 2600 կգուժ/սմ²
3. 2800 կգուժ/սմ²
4. 2400 կգուժ/սմ²

15

Ի՞նչ է ներառում կրակելու գործողությունը.

1. պահեստատուփը լիցքավորելը, նշանոցի և փոխադրիչի դնելը, ավտոմատի կոթը ուսին հարմարեցնելը, նշան բռնելը, ձգանը քաշելը,
2. կրակելու համար դիրք ընդունելը, նշանոցի և փոխադրիչի դնելը, նշան բռնելը, ձգանը քաշելը, հրաձգության ժամանակ ավտոմատը պահելը,
3. նշանոցի և փոխադրիչի դնելը, ավտոմատի կոթը ուսին հարմարեցնելը, նշան բռնելը, ձգանը քաշելը, ավտոմատը լիցքաթափելը,
4. նշանոցի և փոխադրիչի դնելը, ավտոմատի կոթը ուսին հարմարեցնելը, նշան բռնելը, ձգանը քաշելը, հրաձգության ժամանակ ավտոմատը պահելը:

16

Որքա՞ն է գնդակի կինետիկ էներգիան մարդու կենսական օրգանների ոչնչացման համար.

1. 7 կգ.ուժ.մ
2. 6 կգ.ուժ.մ
3. 8 կգ.ուժ.մ
4. 5 կգ.ուժ.մ

17

Քա՞նի անգամ կարող են նվազեցնել հարվածային ալիքի, լուսային ճառագայթման ազդեցությունը պարզագույն թաքստոցները՝ փակ ճեղքերը.

1. 5-6 անգամ
2. 2,5-3 անգամ
3. 7-8 անգամ
4. 10-12 անգամ

18

Որո՞նք են կենսաբանական զենքի «զինամթերք» հանդիսանում.

1. մանրէները, վիրուսները, սնկերը, սպորները, բորաքսը,
2. մանրէները, վիրուսները, թթուները, սուլեման, ռիկետսիաները,
3. մանրէները, վիրուսները, սնկերը, ռիկետսիաները,
4. մանրէները, վիրուսները, սպորները, ռիկետսիաները:

19

Որո՞նք փլուզումների կանխարգելման միջոցառումներ չեն.

1. լանջերի կառուցապատումը,
2. պաշտպանիչ հենապատերի կառուցումը,
3. արհեստական փլուզման առաջացումը,
4. ժայռերի, խոշոր քարաբեկորների ամրացումը:

20

Որո՞նք ջրհեղեղների կանխարգելման միջոցառումներ չեն.

1. հեղեղատների կառուցապատումը,
2. պաշտպանիչ պատնեշների կառուցումը,
3. գետի հունների մաքրումը,
4. գետի ափերի բարձրացումը:

21

Ի՞նչ է արգելվում անտառային հրդեհները բացառելու համար.

1. հրդեհավտանգ սեզոնին գետնին զցել վառվող լուցկու, ծխախոտի մնացորդներ, արևի տակ թողնել ապակու կտորներ, կատարել սանիտարական անտառահատումներ,
2. հրդեհավտանգ սեզոնին գետնին զցել վառվող լուցկու, ծխախոտի մնացորդներ, արևի տակ թողնել ապակու կտորներ, խարույկ վառել,
3. կազմակերպել բնակչության հակահրդեհային միջոցառումների ուսուցում,
4. օբյեկտներն ապահովել հրդեհաշիջման տեխնիկայով:

22

Ի՞նչ չի սահմանում ներքին ծառայության կանոնագիրքը.

1. զորքերի մասնակցությամբ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման կարգը,
2. զորամասի և ստորաբաժանումների հիմնական պաշտոնատար անձանց պարտականությունները,
3. զորամասի և ստորաբաժանումների ներքին կարգուկանոնը,
4. զինծառայողների ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները:

23

Ու՞մ է կանչում ժամապահը հանկարծակի հիվանդանալու /վիրավորվելու/ դեպքում.

1. իր հարևան ժամապահին՝ շարունակելով պահակային ծառայությունը,
2. հերթապահ բժշկին /բուժակին/՝ շարունակելով պահակային ծառայությունը,
3. պահակադիրին՝ շարունակելով պահակային ծառայությունը,
4. գնդի հերթապահին՝ շարունակելով պահակային ծառայությունը:

24

Վաշտում ո՞ր դեպքում չի տրվում «Զգաստ» հրամանը.

1. գումարտակի հրամանատարի ժամանման դեպքում,
2. զորամասի հրամանատարի ժամանման դեպքում,
3. գնդի հերթապահի ժամանման դեպքում,
4. վաշտի մյուս սպաների, ինչպես նաև ավագի և այլ ստորաբաժանումների զինծառայողների ժամանման դեպքում:

25

Ի՞նչ է արգելվում հերթական օրապահին ծառայության կատարման ընթացքում.

1. խոսել,
2. նստել, հանդերձանքը հանել կամ համազգեստի կոճակները արձակել,
3. օգտվել ծառայողական հեռախոսից,
4. կանգնել հանգիստ թուլացնելով աջ կամ ձախ ծունկը:

26

Ի՞նչ հաշվի չի առնվում զինծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս.

1. զանցանքի տեսակը,
2. զանցանքի խորությունը,
3. զինծառայողի պաշտոնը,
4. հատուկ պարտականություններ կատարելը:

27

Ի՞նչ կարգապահական տույժ կարող է կիրառվել կին զինծառայողների նկատմամբ.

1. հիմնական արձակուրդի տրման հետաձգում 1 ամսից մինչև 3 ամիս ժամկետով,
2. գորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում մինչև 1 ամիս ժամանակով,
3. աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում մինչև 5 վերակարգ,
4. կարգապահական վաշտ ուղարկել 10 օրից մինչև 1 ամիս ժամկետով:

28

Ո՞րն է շարքի թիկունքը.

1. շարքի այն կողմը, որին զինծառայողները դարձված են դեպի հետ,
2. շարքի այն կողմը, որը համընկնում է շարժման հակառակ ուղղությանը,
3. շարքի վերջավորությունը դարձումներից հետո,
4. շարքի ճակատի հակադիր կողմը:

29

Ե՞րբ է հռչակվել Լեոնահայաստանը.

1. 1918թ.՝ մայիսի 28
2. 1921թ.՝ ապրիլի 2
3. 1919թ.՝ հունիսի 12
4. 1920թ.՝ մարտի 22

30

Ե՞րբ է կազմավորվել կամավորական շարժումը.

1. 1914թ.՝ մայիսի 23
2. 1914թ.՝ հունիսի 23
3. 1914թ.՝ օգոստոսի 23
4. 1914թ.՝ հուլիսի 23

31

Ե՞րբ է տեղի է ունեցել Խոշարի ճակատամարտը.

1. Ք.ա. 2492թ.
2. Ք.ա. 1792թ.
3. Ք.ա.2472թ.
4. Ք.ա.1492թ.

32

Ո՞ր ստորաբաժանումներն էին մասնակցում թուրքական կողմից 1918թ. մայիսյան հերոսամարտերին.

1. «Դարդանեյան», 3-րդ, 11-րդ կովկասյան դիվիզիաները,
2. 3-րդ, 9-րդ, 11-րդ կովկասյան դիվիզիաները,
3. «Գելիբոլու», 9-րդ, 11-րդ կովկասյան դիվիզիաները,
4. 3-րդ, 11-րդ, 36-րդ կովկասյան դիվիզիաները:

33

Ինչպիսի՞ հողախախտեր են լինում.

1. վնասվածքային, տեղային, ոսկրային, հենաշարժական,
2. վնասվածքային, սովորության, ախտաբանական, բնածին,
3. վնասվածքային, արտաքին, ներքին, ներմկանային,
4. բնածին, տեխնածին, արտաքին, ներքին:

34

Ի՞նչ տեսակի է լինում արյունահոսությունը.

1. զարկերակային, երակային, մազանոթային, քթային,
2. զարկերակային, անոթային, քունքային, քթային,
3. զարկերակային, երակային, մազանոթային,
4. զարկերակային, վերջույթային, մազանոթային, քթային:

35

Ի՞նչ ազդակներից կարող են առաջանալ վերքեր.

1. ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, ինֆեկցիոն, հոգեկան,
2. մեխանիկական, ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, հոգեկան,
3. մեխանիկական, քերծվածքային, ֆիզիկական, քիմիական, ինֆեկցիոն,
4. հրազենային, քիմիական, կենսաբանական, խորքային, մակերեսային:

36

Ո՞րը մարտական գործողությունների ժամանակ առաջին բուժօգնության խնդիր չէ.

1. գնահատել դեպքի վայրը և յուրաքանչյուր տուժածի վիճակը,
2. գրանցել հիվանդների գրանցման մատյանում,
3. դադարեցնել վնասող գործոնի հետագա ազդեցությունը,
4. ապահովել տուժածի արագ տեղափոխումը մոտակա բուժկետ:

37

Որոշել քամու ճշգրտումը, եթե քամին ձախկողային է և ուժգին: Նշանակետը գտնվում է 400 մ հեռավորության վրա, հրաձգությունը վարվում է ԿՁԱ ավտոմատից:

1. 2 թիրախի դեպի աջ
2. 4 թիրախի դեպի ձախ
3. 4 թիրախի դեպի աջ
4. 2 թիրախի դեպի ձախ

38

Որոշել քամու ճշգրտումը, եթե քամին աջկողային է և չափավոր: Նշանակետը գտնվում է 400 մ հեռավորության վրա, հրաձգությունը վարվում է ԿԱ-74 ավտոմատից:

1. 2 թիրախի դեպի աջ
2. 1 թիրախի դեպի ձախ
3. 2 թիրախի դեպի ձախ
4. 1 թիրախի դեպի աջ

39

Որոշել մինչև նշանակետը եղած հեռավորությունը, եթե նշանակետը 2,2 մ բարձրությամբ բեռնաստար ավտոմեքենա է և փակվում է բութ մատով:

1. 65 մ
2. 55 մ
3. 75 մ
4. 85 մ

40

Որոշել նշանակետի բարձրությունը, եթե այն երևում է հեռադիտակի սանդղակի 3 փոքր բաժանքներով և գտնվում է 800 մ հեռավորության վրա:

1. 12 մ
2. 14 մ
3. 10 մ
4. 22 մ

41

Նշանակետի բարձրությունը 70 սմ է, այն գտնվում է 350 մ հեռավորության վրա: Որոշել անկյունային մեծությունը:

1. $U = 0-02$
2. $U = 0-01$
3. $U = 0-20$
4. $U = 0-10$

42

1:50000 մասշտաբի քարտեզի վրա չափակարկինով չափվել է 12 սմ, իսկ կուրվիմետրով նույն հատվածի երթուղին՝ 16 սմ: Որոշել ուղիղ գծով և իրական երթուղով հեռավորությունները մետրերով և դրանց տարբերությունը:

1. 15500 մ, 20000 մ, 4500 մ
2. 10500 մ, 16000 մ, 5500 մ
3. 6500 մ, 7500 մ, 1000 մ
4. 6000 մ, 8000 մ, 2000 մ

43

Կայծակի փայլատակումից հետո որոտի ձայնը դիտորդը լսեց 7 վրկ հետո: Որոշել կայծակի հեռավորությունը դիտորդից:

1. 3310 մ
2. 3820 մ
3. 2310 մ
4. 4250 մ

44

Մարդու հասակը 1,68 մ է: Որոշել նրա քայլի երկարությունը:

1. $\tau = 0,82$ մ
2. $\tau = 0,75$ մ
3. $\tau = 0,79$ մ
4. $\tau = 0,80$ մ

45

Հաշվել հակադարձ ազիմուտները, եթե մագնիսական ազիմուտները տրված են՝ 45° , 285° :

1. 175° , 135°
2. 225° , 105°
3. 160° , 300°
4. 220° , 125°

46

Երեք ավտոմատավոր մինչև նշանակետը քայլերով չափել են համապատասխանաբար 420մ, 450մ և 480մ հեռավորություն: Որոշել հեռավորության միջին արժեքը:

1. 480 մ
2. 490 մ
3. 450 մ
4. 500 մ

47

Միմյանցից 18 մ հեռավորության վրա գտնվող 2 հեռագրասյուները ծածկվում են քանոնի 6 մմ բաժանքով: Որոշել հեռագրասյուների հեռավորությունը դիտորդից:

1. 2500 մ
2. 2000 մ
3. 1000 մ
4. 1500 մ

48

Համապատասխանացնել ԿԱ-74 ավտոմատի (5,45 մմ) պողպատե միջուկով գնդակի թափանցող ներգործությունը.

- | | |
|-------------|----------------------------------|
| ա/ 50% | 1. սաղավարտ – 800 մ |
| բ/ 80% | 2. հողե արգելք՝ ավազահող – 400 մ |
| գ/ 20-25 սմ | 3. աղյուսե շարվածք – 150 մ |
| դ/ 10-12 սմ | 4. 5մմ հաստության զրահ – 350 մ |

49

Համապատասխանացնել տարեթվերը Հայաստանի Առաջին հանրապետության զինվորական նախարարների պաշտոնավարման հետ.

- | | |
|-------------------------|------------------------------|
| ա/ Հովհաննես Հախվերդյան | 1. 1918թ. հունիս-1919թ. մարտ |
| բ/ Քրիստափոր Արարատյան | 2. 1920թ. ապրիլ-նոյեմբեր |
| գ/ Ռուբեն Տեր-Մինասյան | 3. 1920թ. նոյեմբեր-դեկտեմբեր |
| դ/ Դրաստամատ Կանայան | 4. 1919-1920թթ. ապրիլ |

50

Համապատասխանացնել վարակիչ հիվանդություններն ըստ խմբերի.

- | | |
|-----------------|----------------------------------|
| ա/ դիֆտերիա | 1. արտաքին ծածկույթների վարակներ |
| բ/ դիզենտերիա | 2. արյան վարակումներ |
| գ/ տուլարեմիա | 3. շնչառական ուղիների վարակներ |
| դ/ սիբիրյան խոց | 4. աղիքային հիվանդություններ |